ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/78

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 08.09.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 13.09.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Դը Բեստ Շին» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Ուրցաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԱՄՈՒՄ- ԳՀԱՇՁԲ 21/02» գնանշման հարցման ընթացակարգ

Գնման առարկան՝ ՀՀ Արարատի մարզի «Ուրցաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի այգու և այգուն կից զբոսայգու բարեկարգման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Չեղյալ համարել նիստի առաջին արձանագրությունը և գնման գործընթացն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցներին հրավիրելով միաժամանակյա բանակցությունների:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի

վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

« ԴԸ ԲԵՍ ՇԻՆ » ՍՊԸ LLC THE BEST SHIN

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին

Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ. Սարգսյան 49
էլ փոստ՝ the.best.shin@mail.ru
Հեռ. 094 00 00 26
Տնօրեն Աշոտ Թադևոսյան

Պատվիրատու՝ « Ուրցաձորի մանկապարտեզ ՀՈԱԿ », որը գտնվում է Տիգրան Մեծի փողոց 65 հասցեում
Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱՄՈՒՄ- ԳՀԱՇՁԲ 21/02,
Առարկան՝ Գնանշման հարցման հրավերում նշված է, որ գնման ընթացակագն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն: Այսինքն պետք է տեղի ունենային հետագա բանակցություններ: Բայց բանակցություններ տեղի չեն ունեցել և հայտերի բացման նիստում որոշվել և հայտարարվել է հաղթող մասնակիցը:
Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջ՝ գնման գործընթացն չի իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն, Պատվիրատուն չի ծանուցել բանակցությունների անցկացման վերաբերյալ, տեղի չեն ունեցել բանակցություններ, հայտերի բացման հետ միաժամանակ հայտարարվել է հաղթող մասնակցի անվանումը, սեպտեմբերի 3-ին նիստի մասնակիցները հայտարարել են անգործության ժամկետ 5 օր և հայտարարել են պայմանագիր կնքելու մասին որոշում սեպտեմբերի 8-ին (անգործության հինգերորդ օրը պետք է լիներ սեպտեմբերի 9-ը): Պահանջում ենք չեղյալ համարել նիստի առաջին արձանագրությունը և գնման գործընթացն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն: Այսինքն «ՀՀ ԱՄՈՒՄ- ԳՀԱՇՁԲ 21/02» ծածկագրով մրցույթի մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

բանկի անվանումը և հաշվեհամարը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ Հ/Հ 2472401738040000

TADEVOSYAN ASHOT 3605950949

Digitally signed by TADEVOSYAN ASHOT 3605950949
Date: 2021.09.11 10:38:16 AMST

«ԴԸ ԲԵՍ ՇԻՆ» ՍՊԸ Տնօրեն՝ Ա. Թադևոսյան
(մասնակցի անվանումը)

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

.